

նա եղեցի... Հեղի
 Թէպէս ըստդու՞մք կան այսպիսի,
 Բայց Կոգերցեցի...
 Հրամանն այս է Ամաչի
 Դուռիկ Դոնսախա տղայի
 Որն որ ասէր հարս եւ փեսա
 Բաժնի էին Դուռնեկդի
 Ոչ է նման Ալտակնի.
 Ոչ հայր նման...
 Եւ ոչ սիրելիք... Եղբարք, ոչ ըստի եկամք ՝ սորա:

Ծանոթ. Քուչուկ-Հովհաննիսյանը թվագրում է XVII-XVIII դարերով:

Հրատ. Կуч.-Иоаннесов, ""Известия Таврической
 архивной комиссии,"" N44, անանձնատիպ, էջ 2-4:

ՅԱԼԹԱ

Յալթա քաղաքի առավել աչքի ընկնող պատմաճարարապետական հուշարձաններից է հայկական եկեղեցին, որը գտնվում է Լեսնայա և Զադորոգնայա փողոցների համան անկյունում՝ բարձր ըլլի հարթության վրա: Տաճարը շրջակայքի նկատմամբ ունի աիրապետող դիրք: Նրան հասնելու համար պետք է բարձրանալ տվելի քան 100 աստիճան ունեցող լայն սանդուղքով, որի աջ և ձախ կողմերին ծփում են երկնասույզ նոճիները: Հոփսիմեապի այս եկեղեցին կառուցվել է 1905-1917 թթ. ընթացքում, բաքվեցի մեծահարուստ նավթարդյունաբերող Պ. Ղուկասյանի (Տեր-Ղուկասով) ծախսով: Շինանյութը գորշավուն ավաղաքարն է: Տաճարը նվիրած է նպաստավորողի վաղամեռիկ գասեր՝ Հոփսիմեի հիշատակին: Ծառաարապետ Տեր-Միքեյլյանն է: Իկոնոստասի քանդակադարձները կարարել են Դ. Մերկուրովը և Տարագրոսը (Տեր-Վարդանյան): Գմբեթի առաստաղը նկարազարդել է Վարդգես Սուրենյանցը, որի շիրիմը գտնվում է եկեղեցու մուտքի ձախ կողմում, փոքր-ինչ ներքև:

Յալթայի տաճարը փաստորեն գամբարան՝ եկեղեցի է, քառանկյուն հառակադժով. բաղմանիսա թմբուկին հենված է ըրգաձև ծածկով ավարտուն գմբեթը: 1970 թ. այն վերածված էր հնագիտական թանգարանի:

Ղուկասյան գերգասանի գամբարանատունը գտնվում է տաճարի առաջին հարկում, լավ հզված սպիտակ մարմարե պատեր ունեցող սրահում: Ցինկապաա վեց գագաղներից երեքը բացված են, իսկ մյուս երեքը, մեզ ուղեկցող աշխատակցի պատմելով՝ անդում են: Դամբարանների որմնախորշերի վրա ագուցված մարմարե սալաքարերին ոսկեղօծ առներով զրված է:

Զախից աջ՝

396. Առաջինին. 6 առդ.

ՀՈՒՓՄԻՄԷ /ՊՕՂՈՍԵԱՆ/ ՂՈՒԿԱՍԵԱՆՑ. ԾՆ. 14 ԴԵԿՏ. 1883/ ՎԱՆՁ. 5 ՅՈՒՆԻՍԻ/ 1901:

397. Երկրորդին՝ 4առդ.

ԱՂԵՔՍԱՆԴՐ ՊՕՂՈՍԵԱՆ/ ՂՈՒԿԱՍԵԱՆՑ./ ԺՆ. 28 ՕԳՈՍ. 1885/

ՎԱԽՃ. 9 ԱՊՐ. 1909:

398. Երրորդին՝ 3 տող.

ՄԱՐԳԱՐԻՏ ՊՕՂՈՍԵԱՆ/ ՂՈՒԿԱՍԵԱՆՑ./ ԾՆ. 14 ՅՈՒԼԻՍԻ 1893/ ՎԱԽՃ. 12 ՍԵՊՏ. 1913:

Վիժաղրական արշավախումբը շրջագայեց նաև Բաաուրինյան (Գրաֆսկոյե) և Լիվադյան դերեզմանոցներում: Հնագույն տապանադերեր սյսաեղ չկան:

ԱԼՈՒԾՏԱ

399. Առողջարան «Ուոյոս»: Պուրակի վարընթաց աստիճանների ապիարակում.

Տուպանաքար սպիտակ մարմարից, ըուսական դեղեցիկ դարձաքանդակներով, ուղղահայաց վիճակում. դիմացը՝ հողի մեջ դրված մարմարակերտ սպիտակավուն վաննա, որի մեջ ջուրը լցվել է տապանաքարի կենտրոնում փորված անցքի ծորակից: Արձանադրությունը, 5 առդ, փորագրված է միջնամասում.

ՇԻՐԻՄՍ Է ԽՈՀԵՄԱԶԱՐԴ ԱՆԱԲԻՔԵՒՆ, / ՈՐ ԱՆԽՆԴԱՑ ԴՈՒՍՏՐ ՄԼԱՂՏԼԵ/ՍԻ ԿԱՐԱՊԵՏԻՆ, / ԵՒ ԿԻՆ ՂԱԼԱԴԱԼԸ ՕՂԼՈՒ ՅՕՀԱՆԵՍԻՆ, / ԹԷ ՀԱՆԴԻՊԻՔ ՏՈՒՔ ԶՈՂՈՐՄԻՍ Ը [ՆԴ] ՀԱԻՐՄԵՐԻՆ:/ ԹՎԻՆ [Թ]. ԴԵԿՏ./ ԴԱ. (21):

Ժանոթ. Տապանքարի կենտրոնում ցեմենտով պիրկ սվաղ է, որ չկարողացանք պոկել: Թերևս, այսպեղ է եղել թվականը, սակայն կարելի է նաև կարծել, որ կցադրով դրված ԹՎԻՆ/ տառակալակցությունը կարող էր նշանակել Ռ (հաղար), ուստի $1000 + 551 = 1551$: Ուրեմն՝ կոթողը պատրաստվել է 1551 թ. դեկտեմբերի 21-ին: Նման մոտիվներով տապանաքարեր և խաչքարեր առավել շատ կան 17-18-րդ դարերից:

ԿԻԵՎ

Արևելյան քոչվորական ցեղախմբերի ավերիչ ասպատակությունների պատճառով մայր Հայրենիքից արտադաղթած հայ ընտանիքների մի մասը հանդրվան էր դառնում նաև Հին Ռուսիայի մայրաքաղաքում՝ Կիևում, որտեղ աստիճանարար ներդրավել էր քաղաքական-անասական կյանքի ոլորտը: Դեռևս Կիև-Պեչորյան մայրավանքի «Հարանց վարքում»՝ «Պատերիկում», հիշատակվում է հմուտ մի Հայ ընտանիքի մասին. «Այն ժամանակ Կիև քաղաքում կար ոմն բժիշկ, աղդուծյամբ և հավատով հայ..., որի նմանը չկար...»⁹⁸: Այդ բժիշկը բուժում էր Չեռնիդովում հիվանդացած իշխան Վլադիմիր Մոնոմախին (1113-1125): Կիևում ապրում էին, «այդ ընտանիքի հավատալիցները»⁹⁹: Կիևում կար Հայոց թաղամաս, ուր սիրում էր հաճախել կուսակրոն ոմն Ֆեոդոսի, «որպեսզի վիճի Հայերի հեռ հավատքի հարցերով»¹⁰⁰:

Գրավոր սպրիտներում պահպանված մի շարք վկայությունների հիման վրա Լ. Ա. Խաչիկյանը հավաստում է Մ. Տիխոմիրովի այն հեռուկությունը, ըստ որի «Կիևում եղել է լիակազմ հայ-

⁹⁸ Լ. Ա. Խաչիկյան, Հայերը Ռիմ Մոսկվայում..., էջ 43: Տե՛ս Գալս՝ Նոր Գյուրթեր Կիևի Ռիմ հայկական գաղութի մասին, «Ուկրաինական և հայ ժողովուրդների կապերն ու րարեկամությունը» գիտական նստաշրջանի Գյուրթերի ժողովածու, Երևան, 1961, էջ 110-111 (ոռու.):

⁹⁹ Լ. Ա. Խաչիկյան, Հայերը Ռիմ Մոսկվայում... էջ 43: Հմտա. Л. Меликсет-Бек, Древняя Русь и Армения. "Сборник трудов Института языка АН Арм. ССР", 1946, с 22.

¹⁰⁰ Տե՛ս Изложение веры церкви Армянской. Историко-догматическое исследование И. Троицкого. СПб, 1875, с. 245-247.